Регион и мир, 2019, № 5

Կաթողիկոսական Աթոռի անցումը Պահլավունիներին. Գրիգոր Բ Վկայասեր

Ներսիսյան Տ. Ա.
Երևանի պետական համալսարանի
աստվածաբանության ֆակուլտետ (Հայաստան, Երևան)
nersisyan905@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Պահլավունի, կաթողիկոս, տեսիլք, վերակազմակերպում, հայրապետական աթոռ, տոհմ, եկեղեցի, մագիստրոս, Արշակունի, Գրիգոր Լուսավորիչ

Переход Престола Католикоса Династии Пахлавуни. Григор Б Вкайасер

Нерсисян Т. А.
Теологический факультет
Ереванского государственного университета (Армения, Ереван)
nersisyan905@gmail.com

Резюме: Претензии династии Пахлавуни к престолу Католикоса стали реальностью благодаря усилиям Григора Магистроса. Хотя после смерти князя, все же, католикосом стал его сын – Ваграм-Григор Пахлавуни, которого в дальнейшем стали звать Григор Б Вкайасер. После того, как он зашел на престол, армянская церковь была реорганизована, в результате чего произошли некоторые изменения.
При Вкайасере патриарший престол начал раскалываться. Главной причиной этого являлось отсутствие независимой централизованной государственности. Расколу способствовало также слабое ведение со стороны католикоса.
Ключевые слова: Пахлавуни, католикос, видение, реорганизация, патриарший престол, династия, церковь, магистр, Аршакуни, Григорий Просветитель

Transition of Catalicosate to Pahlavuni: Grigor II Vkayaser

Nersisyan T.A.
Theological Department of
Yerevan State Uniwersity (Armenia, Yerevan)
nersisyan905@gmail.com

Abstract: The ambition of the Pahlavuni noble family to the throne of the Catholicos became a reality thanks to the efforts of Grigor Magistros. Although after the death of the prince, nevertheless, his son Vahram-Grigor Pahlavuni, who was later also called Grigor II Vkayaser, became the Catholicos. After his reign, the Armenian church was reorganized, with the result that some changes were made.
During the reign of Vkayaser a split started at the patriarchal throne. The main reason for this was the lack of centralized statehood. The split was also facilitated by the weak rule of the Catholicos.
Keywords: Pahlavuni, Catholicos, vision, reorganization, patriarchal throne, church, magister, Arshakuni Gregory Illuminator.

Հայոց եկեղեցու պատմության այն դրվագը, երբ կաթողիկոսական աթոռն անցավ Պահլավունիների տոհմին, անմիջականորեն կապված է Գրիգոր Մագիստրոսի գործունեության հետ: Նա հայ միջնադարի աշխարհական ամենափայլուն դեմքերից մեկն է: Նրա ծննդյան և մահվան թվականներն աղբյուրներում ստույգ վկայված չեն և գրականության մեջ ենթադրաբար են նշվում, առավել տարածված են՝ *990-1058* թթ.: Ստացած կրթության մասին նույնպես փաստեր չկան:Համարվում է, որ նա ուսանել է Անիում և Կ.Պոլսում, քանի որ դատելով պատմիչների վկայություններից և հենց իր գործերից ու նամակներից՝ փայլուն կրթություն էր ստացել ու գիտելիքների ահռելի պաշար ուներ:

Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վահրամը, որ ձեռնադրության ժամանակ ստացավ Գրիգոր անունը, իսկ ավելի ուշ՝ Վկայասեր մականունը, դարձավ Պահլավունիների կաթողիկոսական աթոռի առաջին գահակալը:**Նրա աթոռակալությամբ Հայոց կաթողիկոսների հաջոր-**

դականության մեջ տեղի ունեցավ մի էական փոփոխություն:Կաթողիկոսական աթոռը համարվեց տոհմական, և Պահլավունիները (Վկայասերից հետո մայրական գծով), ովքեր ներկայանում էին իբրև Հայոց առաջին հայրապետ Ս.Գրիգոր Լուսավորչի տոհմակիցներ, սկսեցին ժառանգականության սկզբունքով բազմել կաթողիկոսական գահին, այս երևույթը շարունակվեց շուրջ մեկ ու կես դար:[1]

Այս գործընթացն իր նախապատմությունն է ունեցել՝ սկսելով դեռևս 11-րդ դարի 20-40-ական թվականներին, երբ Բագրատունյաց թագավորության մեջ կարևոր դիրքի հասած Պահլավունի իշխանական տոհմի ներկայացուցիչները նպատակադրված շարժում էին սկսել կաթողիկոսական գահին տիրանալու համար:Այն մի ուշագրավ, հեռուն գնացող ծրագիր էր, որն ուներ որոշակի դրդապատճառներ և հիմնավորումներ:**Փաստերը համադրելով՝ կարծում ենք, որ այդ գործի հիմքը դրեցին Անիի թագավորության ազդեցիկ գործիչներ սպարապետ Վահրամ Պահլավունին և նրա եղբայր Աբլղարիբ մարզպանը, իսկ բուն ծրագրի հեղինակն ու կյանքի կոչողը վերջիններիս եղբորորդի Գրիգոր Մագիստրոս Պահլավունին էր**[2]:

Քննվող ժամանակաշրջանի բնորոշ հատկանիշներից մեկը Քրիստոսի Ծնընդյան, Խաչելության 1000-ամյակի լրման հետ կապված վախճանաբանական մըթնոլորտն էր, որը քրիստոնյա հավատացյալ ժողովրդի վրա մեծ ազդեցություն էր թողնում:

Պարզ է, որ Գրիգորն այս մթնոլորտի մեջ գտնվելով, նույնպես ազդվում էր տարատեսակ գուշակություններից: Հայ իրականության մեջ այդպիսի հիմնական տեսիլքներից մեկը՝ Գրիգոր Լուսավորչի տոհմից սերող վերջին կաթողիկոս Սահակ Պարթևի տեսիլքն է: Դրա մեջ գալիք դժբախտությունների ներկայացումից բացի նաև մարգարեություն է արվում հեռավոր ապագայի մասին, որի մեկնությունը հետևյալն է.Արշակունիների թագավորությունն ու Գրիգոր Լուսավորչի տոհմից հայրապետությունը պիտի դադարեն գոյություն ունենալուց, սակայն, Հայոց աշխարհում փոթորիկների անցնելուց հետո, կրկին Արշակունի տոհմից մեկը թագավոր է դառնալու, և հայրապետական աթոռին նստելու է Գրիգոր Լուսավորչի շառավիղներից մեկը: Գրիգոր Մագիստրոսն անշուշտ ծանոթ է եղել այս մարգարեությանը:Ավելին,այդ մասին հիշատակում է իր ծրագրային նամակներից մեկում, որտեղ Սարգիս Անեցուն ծանոթացնում է իր նպատակներին:Նամակը գրվել է Գագիկ Բ-ի հետ գժտության շրջանում:Գրիգորը նշում է, որ թեև կարծես աշխարհի վերջը մոտեցել է՝ ըստ Դանիելի մարգարեության, Սահակ Պարթևի տեսիլքի կամ Մովսես Խորենացու ողբի, բայց ինքն իր կարողության չափով ջանք է թափել երկրի միասնությունը պահպանելու համար և փորձել է երկրի համար խնամակալ լինել:

1045 թվականից հետո Հայաստանն արդեն հայտնվել էր միանգամայն նոր իրադրության առջև:Անիի թագավորությունը վերացել էր, կաթողիկոսը երկրից հեռացված ու մեկուսացված էր, ազնվական զինուժը կազմալուծված էր:Կարծես իրականություն էին դարձել վախճանաբանական մռայլ կանխատեսումները: Գրիգոր Մագիստրոսը, սակայն, հավատացել է Սահակ Պարթևի տեսիլքի իրականացմանը՝ Պահլավունյաց տոհ-մից նոր կաթողիկոսի ի հայտ գալուն:Նա փորձել է նպաստել այդ կանխատեսման կատարմանը: Այդ պատճառով է, որ Անի-Շիրակից հեռու լինելով՝ նա որոշակի մասնակցություն է ունենում այնտեղի եկեղեցական կյանքին:

Գրիգորը որդուն պատգամում է երբեք չմոռանալ հայկական ավանդությունները և իրենց նախնու՝ Գրիգոր Լուսավորչի ճրագի լույսը չմարել, որը նշանա-կում է շարունակել նրա գործը՝ Հայոց կաթողիկոսության առաջնորդումը:Այս պատվիրանը տալուց առաջ Գրիգորը երկարատև գործունեությամբ կարողացել էր հայ հանրության սեփականութ-յունը դարձնել Լուսավորչի տոհմից՝ Պահլավունի կաթողիկոս ունենալու սահակպարթևյան տեսիլքի գաղափարը:Այս ծրագրի իրագործումը Գրիգոր Մագիստրոսը չտեսավ, քանի որ մահացավ *1056* կամ *1058* թվականին[3] :Վահրամը ամենայն հավանականությամբ հաշվի է առել հոր ցանկությունը:Նա կաթողիկոս դարձավ

[1] Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Անիի ազնվականության պատմությունից կամ 3 Գրիգոր Մագիստրոս, Երևան, 2015, էջ 38:

[2] Տե՛ս նույն տեղում,էջ 39:

[3] Տե՛ս նույն տեղում էջ 79:

1066 թվականին՝ օծումից հետո Գրիգոր կամ Գրիգորիս անունը ստանալով:Գրիգոր Լուսավորչից հետո նա երկրորդ կաթողիկոսն էր այդ անունով[4]:Հետաքրքրական է Գրիգոր Պահլավունու հիշատակարանը, որտեղ նա կարծես պատասխան ուղերձ է հղում հորը, իր ծագման և աթոռակալության հիմնավորման մասին, որը Գրիգոր Մագիստրոսի ծրագրի ու հայրական պատգամի փայլուն իրագործումն էր:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ նախ Վահրամ սպարապետի և նրա եղբայր Աբլղարիբ մարզպանի միջոցով բարձրաձայնվեց այս տոհմի Պահլավունի և Գրիգոր Լուսավորչի շառավիղ լինելու մասին, որն ավելի հիմնավորվեց ու տարածում գտավ Գրիգոր Մագիստրոսի ջանքերով:Անիի թագավորության անկումից և կաթողիկոսական աթոռի այսպես ասած գաղթից հետո, բյուզանդացիների վստահությունը վայելող և Հայաստանում ազդեցիկ դիրք ունեցող Գրիգոր Մագիստրոսն ավելի նպատակաուղղված քայլերի դիմեց կաթողիկոսական աթոռի նկատմամբ Պահլավունի տոհմի հավակնությունն իրականություն դարձնելու ուղղությամբ:Չնայած այդ մտահղացումը կյանքի կոչվեց Գրիգոր Մագիստրոսի մահից հետո, սակայն՝ հենց նրա որդու՝ Վահրամի աթոռակալությամբ գործադրվեց շատ երկար ժամանակ, ընդհուպ մինչև 13-րդ դարի սկիզբը:Ճիշտ է, Վահրամ-Գրիգոր Վկայասերի մահից հետո կաթողիկոսական աթոռն անցավ միայն մայրական գծով Պահլավունիներին, որոնք ոչ պատահականորեն գահա-կալելիս հիմնականում Գրիգոր անունն էին կրում, սակայն կարծում ենք՝ իրողությունն այն է, որ վերջիններիս ժառանգական աթոռակալության համար գլխավոր հաղթաթուղթը Պահլավունի տոհմանունն էր:

Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վահրամը, հնարավոր է, որ չցանկանալով հանդերձ, բայց անսալով հորը, հրաժարվել է աշխարհիկ կյանքից և կաթողիկոսական հանդերձ է կրել:

Գրիգոր Մագիստրոսն այնքան հիմնավոր հող էր նախապատրաստել Վահրամի կաթողիկոս դառնալու համար, որ նրան այլ բան չէր մնում, քան, անգամ հոր մահից շուրջ տասը տարի անց, կատարել նրա կամքը, քանի որ այն արդեն նաև հանրային պահանջ էր դարձել: Այս ամենի եկեղեցաբանական հիմնավորումը ձևակերպել է Մատթեոս Ուռհայեցին, գրելով՝«*Զսա յայտնեաց Հոգին Սուրբ նստել յաթոռ Սուրբ Լուսաւորչին Գրիգորի՝ նախնւոյն իւրոյ. . .»*[5]:

Գրիգոր Բ Վկայասերը կաթողիկոսական գահին բազմեց *1066* թվականից:Հաջորդել է Խաչիկ Բ Անեցուն:Ծնվել է Անիում, սակայն ծննդյան թվականը անհայտ է, մահացել է *1105*-ի նոյեմբերին Քեսունի Կարմիր Վանքում, որտեղ և ամփոփվել է:Հոր մահից հետո փոխարինել է նրան դուքսի պաշտոնում՝ նշանակվելով Միջագետքի, Տարոնի և շրջակայքի կուսակալ՝ *1059* թվականին: Կնոջ մահից հետո հրաժարվել է պաշտոնից և նվիրվել հոգևոր կյանքին:Խաչիկ Բ Անեցու մահից հետո հույները ամեն կերպ փորձում էին խոչընդոտել նոր կաթողիկոսի ընտրությունները՝ ձգտելով աշխարհիկ իշխանության պես ի չիք դարձնել նաև հո-գևորը՝ հեշտացնելով հայերի ձուլման գործընթացը: **Ի վերջո, *1065* թ.Կարսի թագավոր Գագիկ Աբասյանն իր թագավորությունը Բյուզանդիային զիջելու գնով ձեռք բերեց հայոց նոր հայրապետ ընտրելու թույլտվություն**:Այս ոչ միայն չի հակասում սկզբնաղբյուրներին, այլև վրկայված է դրանցից երկուսում:[6]

Այնուամենայնիվ ինչո՞ւ նոր կաթողիկոս ունենալու իրավունք ձեռք բերած հայ քաղաքական միջավայրի ընտրությունը կանգ առավ Վահրամ Պահլավունու թեկնածության վրա: Մ.Օրմանյանը պարտադիր պայման է համարում այնպիսի գործչի ընտրության անհրաժեշտությունը, «*որուն յունասէր զգացումները երկբայութեան տեղի չթողուին»,* ըստ այդմ էլ՝ իրադարձությունը բացատրում է միայն դրանով[7]: Իրականում, սակայն, հայրապետական ընտրության վրա կարևոր պետք է եղած լիներ Սահակ Պարթևի տեսիլքի ազդեցությունը: Այն, որ տեսիլքը մոռացված չէր խնդրո առարկա ժամանակաշրջանում, ապացուցվում է սկզբնաղբյուրների օգնությամբ: Նախ՝

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 80:

[5] **Մատթեոս Ուռհայեցի** Ժամանակագրութիւն, Վաղարշապատ 1898 , էջ 168:

[6] **Ներսես Շնորհալի**, Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 598, Սրբոյն **Ներսեսի Շնորհալւոյն** Պատմութիւն Վարուցն, «Սոփերք Հայկականք», հ.ԺԴ,Վենետիկ,1854, էջ 17:

[7] **Օրմանյան Մ.** Ազգապատում, հ.Ա,Էջմիածին 2001 , այուն. 1490:

ինքը՝ կաթողիկոսն է իր իսկ գրած հիշատակարանում իր ընտրությունը կապում Սահակ Պարթևի տեսիլքի հետ, բացի այդ էլ՝ տեսիլքի մասին հիշատակվում է նաև Մատթեոս Ուռհայեցու մոտ[8]:Հասկանալի է, որ հայ հասարակական միջավայրը ևս պետք է ծանոթ լիներ դրան: Հաշվի առնելով Պահլավունիների ծագման ավանդույթը հայ միջնադարյան պատմագրության մեջ՝ տեսիլքը կարելի է համարել կատարված:

Այսպիսով, պետք է ասել, որ Սահակ Պարթևի տեսիլքի՝ կաթողիկոսական ընտրության վրա ունեցած ազդեցության մասին տեսակետը կարելի է ընդունելի համարել:

Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունների համաձայն, Վահրամը նախքան աթոռակալությունը ամուսնացել է, սակայն ,քիչ ժամանակ անց, լքել կնոջը և հեռացել աշխարհիկ կյանքից[9]:Համարվել է թե՝ նա անցել է քահանայական ձեռնադրություն, վերանվանվել Գրիգոր և հավանաբար քաշվել Ամանոսի Սև լեռները՝ ճգնակեցության[10]:

Ահա այսպիսի հանգամանքների բերումով է, որ հայոց կաթողիկոսական աթոռ բարձրացավ Վահրամ-Գրիգոր Պահլավունին:**Նրա աթոռակալության շրջանը նշանավորվեց մի շարք իրողություններով, որոնք Հայոց եկեղեցու վերակազմակերպման գործընթացի արդ-յունք էին**:Այսպես, եկեղեցական ժողովը միաձայնությամբ կորցնում է հայրապետական ընտրությունը վավերացնող մարմնի իր գործառույթը՝ այն հանձնելով «սուրբ հոգուն»: Պատահական չէ, որ Գրիգոր Վկայասերի ընտրության առիթով Մ.Օրմանյանը գրում է. «*եպիսկոպոսներէն զումարած ընտրողական ժողով չէ եղածը*»[11]:

Այսպիսով, քաղաքական հանգամանքների բերումով եկեղեցական ժողովը միաձայնությամբ զրկվում է կաթողիկոսական ընտրություն անցկացնելու իրավասությունից, որը հայ պատմագրության ընկալմամբ, հանձնվում է «սուրբ հոգուն»:Իրականում վերադարձ է կատարվում կաթողիկոսական իշխանության ժառանգականության կարգին. հայրապետական աթոռն անցնում է Պահլավունյաց տան անդամներին,որոնք իրենք են նշանակում իրենց հաջորդողներին:

Հայոց եկեղեցու վերակազմակերպման մյուս դրսևորումը կաթողիկոսական տիտղոսի փոփոխությունն էր:Արդեն Գրիգոր Գ Պահլավունու աթոռակալության կապակցությամբ Մատթեոս Ուռհայեցին գործածում է «Կաթողիկոս ամենայն տանն հայոց»[12] արտահայտությունը՝ «կաթողիկոս Հայոց Մեծացի»-ի փոխարեն:*1160-1170*-ական թթ. հայ-բյուզանդական բանակցությունների վավերագրերում ևս գտնում ենք նոր տիտղոսի գործածության դրվագներ[13]:Փոփոխության պատճառը միանգամայն հասկանալի է. Հայոց կաթողիկոսարանի աշխարհագրական ընկալումը հետզհետե փոխարինվում է էթնիկական հատկանիշով[14]:Հայոց կաթողիկոսը դրանից հետո ոչ միայն Մեծ Հայքի, այլև տարասփյուռ ողջ հայության հոգևոր առաջնորդն է:Հենց այս գիտակցումով է *1160*-ական թթ. Ներսես Շնորհալին սահմանել Հայոց կաթողիկոսի հոգևոր իրավասության սահմանները՝ այն տարածելով հայազգի բոլոր այն քրիստոնյաների վրա, «*որք յարևելս ՝ի սեփական աշխարհս Հայաստանեայց բնակեալք, և որք յարևմտեան կողմանսդ սահեալք նշդեհութեամբ,և որք ի Միջերկրեայս*»[15]:Հայրապետի նոր տիտղոսն օտար աղբյուրների կողմից համարժեք է դիտվում «խալիֆա» մահմեդական տիտղոսին[16]:

Գրիգոր Բ Վկայասերը իր աթոռակալության ընթացքում ձեռնարկում է հեռավոր և տևական ճանապարհորդություններ, որոնք արդյունք էին առավելապես քաղաքական նպատակների, քան կրոնական:Կաթողիկոսի մասին առավել շատ տեղեկություններ հաղորդող և ժամանակով ամենամոտ պատմագիր Մատթեոս Ուռհայեցին այդ ճամփորդությունները բացատրում է՝ «միայնակեցութեան սիրով»[17], «փափագանօք ի գլուխ լերանց բնակիլ»[18], «ընդ ամապատսն առաջին սրբոց

[8] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի** ,էջ 246:
[9] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 102:
[10] Տե՛ս **Մ.Օրմանյան**,սյուն. 1491-1492:
[11] **Օրմանյան Մ.**, սյուն. 1489:
[12] Տե՛ս , **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 360:
[13] Տե՛ս, **Բոզոյան Ա.**, Հայոց կաթողիկոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, «Քրիստոնյա Արևելքը և Հայաստանը», Երևան, 2000, էջ 80-85:
[14] Նույն տեղում:
[15] **Ներսես Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, աշխ.՝ **Է.Բաղդասարյանի**,Երևան,1995,էջ 53:
[16] Տե՛ս, **Բոզոյան Ա.**,նշվ. աշխ., էջ 83-84:
[17] **Մատթեոս Ուռհայեցի,** էջ 204:
[18] Նույն տեղում, էջ206:

հարցն»[19] շրջելու մտադրությամբ:Այս մեկնաբանությունը տեղ է գտել նաև մի շարք ուսումնասիրություններում: Նրա ճամփորդությունները Օրմանյամը բացատրել է «կրօնաւորական բարեպաշտութեանց»[20] մղումով:

Ուռհայեցին,ամենայն հավանականությամբ, նպատակ ունի քողարկելու ճանապարհորդությունների իրական նպատակը:Այն, որ նա պետք է տեղյակ լիներ Գրիգոր Բ-ի՝ գոնե Եգիպտոս կատարած այցի մասին, գրեթե միանշանակ է. չէ՞ որ Ֆաթիմյանների հայազգի կրոնափոխ վեզիր Բադր ալ-Ջամալին Կահիրեի պարիսպների երկրորդ գծի կառուցման նպատակով հենց Եդեսիայից էր տարել բազմաթիվ հայ արհեստավորներ, իսկ շինարարության վերահսկողությունը հանձնել էր Հովհան Կրոնավորին՝ նույնպես Եդեսիայից: Պատմագիրը, սակայն, Բադրին հիշատակում է միայն մեկ անգամ՝ սելջուկ զորավար Ախսիսին հաղթելու և Եգիպտոսում խաղաղություն հաստատելու կապակցությամբ:

Մատթեոս Ուռհայեցին լռում է նաև Գրիգոր Բ-ի Կ.Պոլիս և Հռոմ կատարած ճանապարհորդությունների իրական նպատակների վերաբերյալ՝ չցանկանալով պատմել հայոց կաթողիկոսական աթոռը վերականգնող ու նրա վրա Լուսավորչի տոհմին վերահաստատող կաթողիկոսի միարարական գործունեության մասին:Պատմագիրը նպատակ ունի մի կողմից՝ իդեալականացնելու Գրիգոր Բ-ին՝ նրան վերագրելով Գրիգոր Լուսավորչին հատուկ գծեր, մյուս կողմից էլ՝ քողարկելու նրա ճանապարհորդությունների քաղաքական հիմքը:Այսպիսով, տարասփռված հայությանը այցելելու և ստեղծված քաղաքական իրավիճակին արձագանքելու նպատակով հայոց կաթողիկոսը ձեռնարկում է տնական ճանապարհորդություններ դեպի Կ.Պոլիս, Հռոմ, Եգիպտոս, Երուսաղեմ: Դրանց հերթականության վերաբերյալ սկզբնաղբյուրների հաղորդած տվյալները խիստ բազմազան են և աններ-դաշնակ:Այսպես օրինակ, Վարդան Արևելցու վկայությամբ՝ գահակալումից մեկ տարի անց մեկնում է Կ.Պոլիս[21], մինչդեռ մյուս աղբյուրները ոչ հաստատում, ոչ էլ հերքում են այս տեղեկությունը: Ուսումնասիրողները Գրիգոր Բ Վկայասերի ճամփորդությունների սկիզբն են համարում *1074* թ.:Դրանից մեկ տարի առաջ Գրիգոր Բ-ն արտոնել էր Սարգիս Հոնեցու կաթողիկոսությունը՝ նրան ուղարկելով «զքօղն եւ զգաւազանն եւ զսուրբ նշանն Տէր Պետրոսի»[22]:Փիլարտոս Վարաժնունուն ենթակա տարածքների հայության հովվապետությունը հանձնելով Սարգսին՝ Գրիգորը հանգիստ կարող էր հեռանալ այդ շրջաններից ու սկսել իր ճամփորդությունները:Այս կարծիքը խիստ հավանական է, մանավանդ որ համապատասխանում է Մատթեոս Ուռհայեցու և Սմբատ պատմիչի վկայություններին[23]: Այսպիսով, հավանաբար *1074* թ. հայոց կաթողիկոսը ելնում է երկար ճանապարհորդությունների:

Հայրապետի ուղևորությունը Կ.Պոլիս ներկայացված է Ներսես Շնորհալու կենսագրի կողմից[24]: Գրիգորը՝ ով լավ տիրապետում էր հունական լեզվին և դպրությանը, հարկադրված եղավ մասնակցելու աստվածաբանական քննարկումների:Շատ չանցած՝ կաթողիկոսը թույլտվություն խնդրեց մնալու բյուզանդական մայրաքաղաքում և օգտվելու նրա հարուստ գրադարաններից: Կայսրը լիովին բավարարեց նրա խնդրանքը:Բազմաթիվ հայ թարգմանիչների և գիտնականների համախմբելով իր շուրջը՝ Գրիգոր Վկայասերը ծավալում է թարգմանչական բուռն գործունեություն:Ընդ որում, թարգմանված մատյանների քանակն ու նշանակությունն այնքան մեծ էին, որ հայոց հայրապետը, զգուշանալով այն բանից, որ հույները կարող են արգելել դրանց դուրսբերումը մայրաքաղաքից, թարգմանություններով բեռնված իր ուղեկիցներին թաքուն կերպով նավ է նստեցնում՝ նրանց միանալով ավելի ուշ:

Վկայասերի ճամփորդությանը դեպի Հռոմ տրվել են տարբեր գնահատականներ: Օրմանյանն այն համարել է անհնար[25], մինչդեռ Ղ. Ալիշանը, Մ.Չամչյանը, Լ.Կոգյանը, Պ. Անանյանը, հակառակ կարծիքն են հայտնել[26]՝

[19] Նույն տեղում, էջ 228:

[20] **Օրմանյան Մ.,** սյուն. 1498:

[21] **Վարդան Արևելցի** , Տիեզերական պատմություն, Վենետիկ 1862, էջ 102:

[22] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 226:

[23] Տե՛ս, **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 228: **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 82:

[24] Սրբոյն **Ներսէսի Շնորհակլոյ** Պտմութիւն վարուցն, էջ 22:

[25] Տե՛ս, **Օրմանյան Մ.**,սյուն.1498:

[26] **Չամչեանց Մ.**,Պատմութիւն Հայոց, հ.2, Երևան, 1984, էջ 1000: **Ալիշան Ղ.**, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 34: **Կոգեան Լ.**, Հայոց եկեղեցին,

արժանահավատ համարելով Կիրակոս Գանձակեցու վկայությունը. «Եւ երթեալ սրբոյ հայրապետին ի Հռոմ, մեծապէս պատուեցին զնա ազգն ֆռանկաց»[27]:Այս փոքր մանրամասնությունը հայ պատմագրության մեջ միակն է դեպի Հռոմ կատարած ուղևորության վերաբերյալ:Մատթեոս Ուռհայեցին և Սըմբատ Սպարապետը սոսկ անվանապես են հիշատակում այն[28]:Արդեն10-11-րդ դդ. հայերն ունեին դեպի արևմուտք կատարվող ուխտագնացությունների հարուստ ավանդույթ:[29] Այս համատեքստում Գրիգոր Վկայասերի ճամփորդությունների այս հերթական դրվագին կարելի է հաղորդել նաև ուխտագնացության բնույթ:

Հայոց հայրապետի ճամփորդությունների հաջորդ փուլը կապված է Եգիպտոսի հետ: Այս մասին հետա-քրքրություն է ներկայացնում հատկապես Կիրակոս Գանձակեցու վկայությունը, ըստ որի՝ նավաբեկությունից հետո Գրիգոր կաթողիկոսն աղոթքի միջոցով հասավ այն բանին, որ հորդառատ անձրև տեղա ողջ Եգիպտոսի վրա, ինչը սարսափ հարուցեց բնակչության շրջանում, որովհետև նախքան այդ միայն Մովսես մարգարեի և Հիսուս Քրիստոսի այցելության ժամանակ էր անձրև եկել Եգիպտոսում[30]: Հայոց կաթողիկոսը, շնորհիվ դրա, «բազում փառք եւ մեծութիւնն ընկալաւ ի թագավորէն Եգիպտոսի»[31]: Այսպիսով, հայ պատմագրության մեջ հյուսվել է գեղեցիկ ավանդություն՝ մահմեդական երկրում հայոց կաթողիկոսի ջերմ ընդունելությունը բացատրելու համար:

Գրիգորը տարբեր ժամանակներում այցելելով ժամանակի քաղաքակրթական-հոգևոր կենտրոնները՝ նշանակել է տեղապահներ, որով ցանկանում էր ապահովել աթոռը հունական ոտնձգություններից, որոնք իր վախճանից հետո կարող էին արգելք հանդիսանալ կաթողիկոսական նոր ընտրություններին, իսկ տեղապահի առկայության դեպքում հարցը նախապես լուծված էր,ինչպես և եղավ:

Մինչև Գրիգոր Վկայասերի մահը՝ *1105* թ., Բարսեղ Ա Անեցին համարվում է նրա աթոռակիցը, որից հետո մինչև *1113* թ.՝ միանձնյա կաթողիկոս, թեև ձեռնադրությունից անմիջապես հետո նա իր ձեռքն է վերցնում կաթողիկոսական վարչական իշխանությունը:

Առհասարակ քաղաքական անկայունությանը հաջորդում է նաև հոգևորը:Գրիգոր Վկայասերի օրոք Հայոց հայրապետական աթոռը սկսեց պառակտվել:Մ.Օրմանյանը գրում է. «*Այս շփոթ կացութեան մէջ Բարսեղն էր միայն, որ իրաւ հայրապետական պաշտօն կը վարէր, իր հօտին հոգածութիւնն ունէր եւ անոր ներքին եւ արտաքին պէտքերը լրացնելու կաշխատեր:...Իր մօրեղբօր բարեացակամութենէն օգտուելով եւ անոր ձեռնթափ վիճակին դատարկը լրացնել փափաքելով, համարձակ կընդլայնէր իր ձեռնարկները...*[32]»

Այդ պառակտումների գլխավոր պատճառը անկախ կենտրոնացված պետականության բացակայությունն էր: Այդ պառակտումներին նպաստում է նաև թույլ կաթողիկոսական վարումը:Այսպես, կաթողիկոսը փոխանակ նախանձախնդիր լինելու տարբեր հատվածներում կուտակված հայության հոգևոր խնդիրներով, զբաղված էր շրջագայություններով:

Այսպիսով, ստեղծվել էր մի այնպիսի կացություն, որ կային մի քանի կաթողիկոսներ:

Աթոռի պառակտված վիճակը կարծես չէր մտահոգում գլխավոր կաթողիկոս Գրիգոր Վկայասերին, բայց կար մեկը, ով բավականին մտահոգ էր. դա Անիի կաթողիկոս Բարսեղ Անեցին էր, որին հաջողվում է վերականգնել Հայոց պառակտված աթոռը :

Վկայասերի մահվան օր նշանակված է «*ի տրէ ամիս, յառաջին շաբաթն ամռան աղուհացիցն, յաւուր շաբաթու*»[33]:Ամռան աղուհացի առաջին շաբաթը, Եղիական կոչված Պահքն է, որի շաբաթ օրը հին տոմարով Երեմիա մարգարեի տոնն էր կատարվում:*1105* թ.-ն այդ շաբաթ օրը հունիսի երեքն էր[34]:Նոր ընտրության կարիք չկար Վկայասերին

Բեյրութ, 1961, էջ 368-371: **Անանեան Պ.**, Գրիգորիս Վկայասէր եւ հայ-հռոմէական յարաբերութիւնները, «Բազմավէպ», 1992, էջ 9-13:

[27] **Կիրակոս Գանձակեցի**,Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 96:

[28] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 228: **Սմբատ Սպարապետ**, էջ 82:

[29] **Դեղեյան Ժ.**, Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում 10-րդ դարի վերջում, 11-րդ դարի սկզբում, «ՊԲՀ», 1984 , էջ 21-36:

[30] **Կիրակոս Գնձակեցի**, էջ 96-97:

[31] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 228:

[32] **Օրմանյան Մ.**, սյուն. 904:

[33] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 372:

[34] **Օրմանյան Մ.**, սյուն. 912:

հաջորդ նշանակելու համար, ոչ էլ նոր ձեռնադրության կարիք:Արդեն 1081 թ.-ի գարնանը կաթողիկոսական ձեռնադրություն էր ստացել Բարսեղը՝ Ապիրատ Պահլավունիի և Վկայասերի քրոջ որդին, ով օրինապես աթոռակից և գործակից էր ճանաչված, և իրապես վարում էր կաթողիկոսական իշխանությունը:Գրիգոր Վկայասերը թաղվեց Շուղրի Կարմիր վանքում:Հայոց կաթողիկոս դարձած Բարսեղ Ա Անեցին այլևս չվերադարձավ Հայաստան և նպատակահարմար գտավ աթոռը պահել ուժեղ հայկական իշխանապետությունում՝ Քեսունի Շուղրի Կարմիր վանքում:[35]

Օգտագործված Գրականության Ցանկ

1. **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
2. **Ներսես Շնորհալի**, Բանք չափաւ, Վենետիկ, 1928:
3. Սրբոյն **Ներսեսի Շնորհալւոյն** Պատմութիւն Վարուցն, «Սոփերք Հայկականք», հ.ԺԴ, Վենետիկ, 1854:
4. **Օրմանյան Մ.**, Ազգապատում,հ. Ա., Էջմիածին, 2001:
5. **Ներսես Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, աշխ.՝**Է.Բաղդասարյանի**, Երևան, 1995:
6. **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն,Վենետիկ, 1862:
7. **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956:
8. **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց, հ.2, Երևան, 1984:
9. **Ալիշան Ղ.**, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ 1873:
10. **Կոզեան Լ.**, Հայոց եկեղեցին, Բեյրութ, 1961:
11. **Անանեան Պ.**, Գրիգորիս Վկայասէր եւ հայ-հռոմէական յարաբերութիւնները, «Բազմավեպ», 1992:
12. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961:
13. **Դեդեյան Ժ.**, Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում 10-րդ դարի վերջում, 11-րդ դարի սկզբում, «ՊԲՀ»,1984:
14. **Մաթևոսյան Կ.**, Անիի ազնվականության պատմությունից կամ 3 Գրիգոր Մագիստրոս, Երևան, 2015:
15. **Բոզոյան Ա.**, Հայոց կաթողիկոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, «Քրիստոնյա Արևելքը և Հայաստանը», Երևան, 2000:

[35] **Օրմանյան Մ.,** այուն.916: